ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 381-Ա «06» 09 2021թ. ք.Երևան

ԷԴԳԱՐ ԱՂԱՍՈՒ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԱՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ԻՐԱՎԱԲԱՆԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 22-3-25.4-Մ4-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի № 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 147-րդ և 151-րդ կետով և Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի № 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 14-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Պետական գույքի կառավարման կոմիտեի իրավաբանական վարչության հայցապահանջների և իրավական ակտերի բաժնի ավագ իրավաբանի (ծածկագիր՝ 22-3-25.4-Մ4-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ացկացվող արտաքին մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 2-ի եզրակացությունը՝ Մրցույթի հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. **Էդգար Աղասու Պողոսյանին** 2021 թվականի սեպտեմբերի 6-ից՝ ինը ամիս փորձաշրջանով նշանակել Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) իրավաբանական վարչության հայցապահանջների և իրավական ակտերի բաժնի ավագ իրավաբանի (ծածկագիր՝ 22-3-25.4-Մ4-1) քաղաքացիական ծառայության պաշտոնում:
2. Ամսական աշխատավարձը՝ ՀՀ դրամ:
3. Էդգար Պողոսյանի համար սահմանված փորձաշրջանի համակարգող նշանակել Կոմիտեի իրավաբանական վարչության հայցապահանջների և իրավական

ակտերի բաժնի գլխավոր իրավաբան (ծածկագիր՝ 22-3-25.4-Մ2-5) Սարգիս Լալայանին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ